10. <http://digital.diplomacy.live/ranking-and-rating/>
11. <http://www.prsa.org/aboutprsa/publicrelationsdefined/#.VT1TxCHtmko>
12. <http://dictionary.cambridge.org/dictionary>
13. [www.gov.am](http://www.gov.am)

Հոդվածը ներկայացվել է տպագրության 14.01.2020 թ.,  
ուղարկվել է գրախոսության 10.04.2020 թ., ընդունվել է տպագրության 17.03.2019 թ.:

316.6

**ԱՐՑԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

***ԱՐԱՅԻԿ ՏԻՐՅԱՆ***

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանի հայցորդ  
[ara.firyar@mail.ru](mailto:ara.firyar@mail.ru)

**Համառոտագիր**

Սույն աշխատանքում առանձնացվել են հոգեբանական պաշտպանության հետևյալ բաղադրիչները՝ արտամղումը, իրականության ժխտումը, տեղափոխումը, կոմպենսացիան, ռեակտիվ կազմավորումը, պրոյեկցիան, ռացիոնալիզացիան և ռեգրեսիան: Փորձարարական հետազոտությունը անցկացվել է՝ ապացուցելու համար այն գիտական վարկածը, որ Արցախի բնակչության շրջանում հոգեբանական պաշտպանության մեխանիզմներից առավել արտահայտված են կոմպենսացիան, ռացիոնալիզացիան, պրոյեկցիան և արտամղումը: Էմպիրիկ հետազոտությունն անցկացվել է Ռ. Պլուտչիկի

«Կյանքի ոճերի ինդեքս»-ի մեթոդական գործիքակազմի, համեմատական SPSS վերլուծության, հարցազրույցի և դիտման մեթոդների միջոցով:

**Բանալի բառեր և բառակապակցություններ**

Պաշտպանության մեխանիզմներ, Արցախի բնակչություն, տարիքային խմբեր, սոկոսային ցուցանիշներ, կոմպենսացիա, ռացիոնալիզացիա:

**EXAMINATION OF THE PSYCHOLOGICAL PROTECTION MECHANISMS OF THE ARTSAKH POPULATION**

*ARAYIK FIRYAN*

Applicant at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

[ara.firyan@mail.ru](mailto:ara.firyan@mail.ru)

**Summary**

In this article the following components of psychological protection have been singled out: expulsion, denial of reality, transference, compensation, reactive formation, projection, rationalization and regression. The experimental study was conducted to prove the scientific hypothesis that compensation, rationalization, projection and expulsion are the most pronounced mechanisms of psychological protection among the Artsakh population. Empirical research was conducted by Plutchik's methodological tools the Life Style Index (LSI) as well as through comparative SPSS analysis, interview and observation methods.

**Keywords and phrases**

Defense mechanisms, the population of Artsakh, age groups, percentage indicators, compensation, rationalization.

**ЭКСПЕРТИЗА МЕХАНИЗМОВ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЗАЩИТЫ НАСЕЛЕНИЯ АРЦАХА**

*АРАИК ФИРЯН*

соискатель армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

[ara.firyan@mail.ru](mailto:ara.firyan@mail.ru)

**Аннотация**

В работе выделены следующие компоненты психологической защиты: вытеснение, отрицание реальности, перенесение, компенсация, реактивное формирование, проекция, рационализация и регрессия. Экспериментальные исследования были проведены, чтобы доказать научную гипотезу о том, что компенсация, рационализация, проекция и вытеснение являются наиболее выраженными механизмами психологической защиты среди населения Арцаха. Эмпирическое исследование было проведено с помощью методологического инструментария Р. Плутчика «Индекс жизненного стиля», сравнительного анализа SPSS, методов интервью и наблюдений.

**Ключевые слова и фразы**

Защитные механизмы, население Арцаха, возрастные группы, процентные показатели, компенсация, рационализация.

**Ներածություն**

Անձի՝ պաշտպանական մեխանիզմներով հագեցած վարքագծի հիմնախնդիրը հանդիպում է ամենուրեք. այն արդիական է ինչպես կլինիկական

հոգեբանության, այնպես էլ սոցիալական ու զարգացման հոգեբանության ոլորտներում, ներկայացված է թե՛ տեսական ուղղություններում և թե՛ կիրառական հոգեբանության շրջանակներում:

Փամանակակից հոգեբանական գիտակարգում պաշտպանության մեխանիզմների հայեցակարգը այս կամ այն առումով ներկայացված է տարբեր հոգեբանական դպրոցներ և ուղղություններ ներկայացնող հետազոտողների կողմից [ 1, 2, 3, 4, 5, 6 ]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոգեբանական պաշտպանությունն ապահովում է անձի սուբյեկտիվ հարմարումը բոլոր տեսակի լարվածության դրսևորումներում (Ջ. Ֆրեյդ, Ա. Ադլեր, Է. Էրիկսոն, Ռ. Լազարուս, Ռ. Պլուտչիկ, Ֆ. Վ. Վասիլյուկ, Լ. Դ. Դեմինա, Ա. Նալչաջյան, R. Plutchik, H. Kellerman, ) [ 7, 8, 9, 10, 11, 12, 13,14,15,16]:

Տեսամեթոդաբանական վերոնշյալ հետազոտությունների արդյունքներում առաջ քաշված եզրակացությունները դառնում են առավել արդիական սահմանամերձ գոտու ազգաբնակչության համար՝ հոգեբանական պաշտպանության համակարգային հիմնահարցերը բարձրացնելու և քննության առնելու, ինչպես նաև ինքնառեալիզացիայի և ազգային ինքնագիտակցության հիմնադրույթները ձևակերպելու տեսանկյունից:

Հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ուսումնասիրության թիրախ է ընտրվել Արցախի բնակչությունը: Փորձարարական հետազոտությունն անցկացվել է 2 փուլով. 1-ին փուլն իրագործվել է 2015-2016 թթ., իսկ 2-րդ փուլը՝ 2017-2018 թթ.: Հետազոտության մասնակիցների ընտրագանգվածը կազմել է 4707 մարդ, որից (ներկայացված է ըստ շրջկենտրոնների) Ստեփանակերտի շրջանում՝ 805 մարդ, որից 462-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 443-ը՝ 2-րդ փուլին, Մարտունու շրջանում՝ 680 մարդ, որից 341-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 339-ը՝ 2-րդ փուլին, Մարտակերտի շրջանում՝ 720 հոգի, որից 368-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 352-ը՝ 2-րդ փուլին, Հադրութի շրջանում՝ 752 հոգի, որից 383-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 369-ը՝ 2-րդ փուլին, Ասկերանի շրջանում՝ 655 հոգի, որից 321-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 334-ը՝ 2-րդ փուլին, Քարվաճառի շրջանում՝ 402 հոգի, որից 184-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 218-ը՝ 2-րդ փուլին, Բերձորի շրջանում՝ 231 հոգի, որից 122-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 109-ը՝ 2-րդ փուլին, Շուշիի շրջանում՝ 462 հոգի, որից 225-ը մասնակցել է հարցման 1-ին փուլին, իսկ 237-ը՝ 2-րդ փուլին:

Հետազոտության մասնակիցների ընտրագանգվածը բաժանվել է երեք տարիքային խմբերի՝

1-ին խումբ՝ 18-29 տարեկան (1-ին փուլ՝ Խումբ Ա, 2-րդ փուլ՝ Խումբ Դ)

2-րդ խումբ՝ 30-59 տարեկան (1-ին փուլ՝ Խումբ Բ, 2-րդ փուլ՝ Խումբ Ե)

3-րդ խումբ՝ 60-ից բարձր (1-ին փուլ՝ Խումբ Գ, 2-րդ փուլ՝ Խումբ Զ):

Հետազոտության նպատակն է բնութագրել և բազմակողմանի վերլուծել սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրսևորման առանձնահատկությունները:

### Փորձարարական մաս

Հոդվածում առանձնացրել ենք փորձարարական հետազոտության մասնակիցների պատասխանները՝ ըստ տարիքային և ժամանակագրարական հատկանիշների: Աղյուսակի տեսքով ներկայացված տվյալները ստացվել են Ռ. Պլուտչիկի-Շ. Քելլերմանի «Կյանքի ոճերի ինդեքս»-ի մեթոդական գործիքակազմի շնորհիվ: Ստորև ներկայացված են հոգեբանական պաշտպանության մեխանիզմների արտահայտվածության տոկոսային ցուցանիշները՝ ըստ վերոնշյալ հատկանիշների (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Պաշտպանության մեխանիզմների արտահայտվածության տոկոսային ցուցանիշները ըստ տարիքային և ժամանակագրական հատկանիշների

	Փուլեր					
	1-ին փուլ. 18-29 տ. Խումբ Ա	1-ին փուլ. 30-59 տ. Խումբ Բ	1-ին փուլ. 60 և բարձր Խումբ Գ	2-րդ փուլ. 18-29 տ. Խումբ Դ	2-րդ փուլ. 30-59 տ. Խումբ Ե	2-րդ փուլ. 60 և բարձր Խումբ Զ
Պրոյեկցիա	43	7	19	35	3	17
Ժխտում	2	2	1	2	1	3
Արտամղում	30	3	7	23	13	18
Ռացիոնալիզացիա	2	38	25	4	49	34
Ռեակցիա	5	12	17	6	8	9
Ռեգրեսիա	8	4	8	19	2	4
Կոմպենսացիա	1	29	19	3	21	12
Տեղափոխում	9	5	4	8	3	3

Ինչպես երևում է աղյուսակից, Ա խմբի պատասխաններում գերիշխում են պրոյեկցիայի և արտամղման ցուցանիշները, ինչը բնութագրական է հետպատերազմյան շրջանի երիտասարդության համար՝ հաշվի առնելով սթրեսածին պայմանների ճնշող ազդեցությունն ու դրանցով պայմանավորված՝ երիտասարդ անձանց մոտ բացահայտված պաշտպանական մեխանիզմների ոչ կոնստրուկտիվ պատկերը: Նկատենք նաև մնացած բոլոր պաշտպանական մեխանիզմների համեմատաբար միատարր բաշխվածության փաստը՝ բացառությամբ իրականության ժխտման, ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի մեխանիզմների արտահայտված ցածր մակարդակի: Հատկանշական է նաև 2-րդ փուլում նույն տարիքային խմբի մոտ արձանագրված պատասխանների դինամիկան (Խումբ Դ): Այստեղ թեև նկատում ենք պրոյեկցիայի և արտամղման մակարդակների որոշակի թուլացում՝ 43%-ից 35%, և, համապատասխանաբար, 30%-ից 23%, սակայն միջավայրի նկատմամբ ոչ կոնստրուկտիվ վերաբերմունքը հիմնականում

շարունակում է մնալ թելադրող: Ժամանակագրական 2-րդ փուլում, որը, ինչպես գիտենք, ընդգրկում է 2017-2018 թվականները, երիտասաղ անձանց շրջանում ակնհայտ է դարձել ռեզրեսիայի տեսակչի աճը, ինչը պայմանավորված է թվարկած նախորդ երկու տեսակի մեխանիզմների աստիճանական թուլացմամբ, ինչի արդյունքում մնացած բոլոր մեխանիզմների դրսևորման մակարդակները գրեթե չեն փոփոխվել:

Բ խմբի (30-59 տարեկան) 1-ին փուլով գրանցված ցուցանիշները ցույց են տվել հետևյալ պատկերը (Աղյուսակ 1): Գերիշխող դիրքում են հայտնվել ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի արտահայտման մակարդակները՝ ռացիոնալիզացիայի թեթևակի առաջնահերթությամբ: Այս պատկերն առավել վառ արտահայտվեց 40-55 տարեկան անձանց մոտ, ինչը հուշող գաղափար է տալիս այս շրջանում պաշտպանական մեխանիզմների արդիականության վերախմաստավորման վերաբերյալ: Նշենք նաև ռեակտիվ կազմավորման նշանակալիության բավականին արտահայտված դրական դինամիկան: Այս պատկերը հնարավոր է բացատրել սահմանամերձ գոտում «առանց պատերազմի, առանց հաշտության» սոցիալ-քաղաքական իրավիճակի հոգեբանական ընկալումների արձագանքներով, որոնք հաստատվել են նաև նույն տարիներին հավաքագրված հարցազրույցների ընթացքում, արձանագրել են անորոշության իրավիճակում պատերազմի հավանական վերսկսման հնարավորության չեզոքացման միտումը և վտանգի սպասման սթրեսածին պայմանները կոմպենսացնող Արցախի Հանրապետության պետական կառույցների նկատմամբ դրական, ազգային-կոնսոլիդացնող վերաբերմունքի արդիականացումը:


Երկրորդ փուլի ընթացքում գրանցված ցուցանիշները ևս արժանի են մեկնաբանման: Նույն տարիքային խմբում (Խումբ Ե) պաշտպանական մեխանիզմների արտահայտվածությունը որոշակի փոփոխություններ է կրել: Եթե Բ խմբի 30-59 տարեկան անձինք ցուցադրում էին գերազանցապես ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի մեխանիզմների ակտիվությունը, ապա Ե խմբի նույն տարիքային ընտրազանգվածը ներկայացավ հետևյալ դինամիկայով: Ռացիոնալիզացիայի մեխանիզմի ցուցանիշներն ամրապնդվեցին՝ աճելով 38%-ից 49%: Փոխարենը, կոմպենսացիայի մեխանիզմը սկսեց աստիճանաբար կորցնել իր նշանակությունը, ինչը նույնպես արտահայտվեց գրանցումների համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ՝ 29%-ից իջնելով 21%: Թուլացավ նաև ռեակտիվ կազմավորման դերակատարությունը հոգեբանական պաշտպանության համակարգում: Անհանգստացնող փաստ է նաև արձանագրվել այդ տարիքային խմբի համար արտամղման ցուցանիշի աճով: Դա վկայում է սթրեսածին պայմաններում երկար մնալու հետևանքով ռիսկային և վտանգավոր գործոնների ապագիտակցականացման կամ դեպի անգիտակցականը արտամղման ռազմավարության մասին:

Ինչ վերաբերում է Գ խմբի ցուցանիշներին, հարկ է ներկայացնել ապակառուցողական գնահատականները: Այն է՝ 60-ից բարձր տարիքային խմբում գրանցված արդյունքները ցույց են տալիս ոչ միայն ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի մեխանիզմների աստիճանական թուլացումը, այլև մնացած

գրեթե բոլոր ցուցանիշների աչքի ընկնող ակտիվացումը: Հավելենք նաև Ջ խմբում (60-ից բարձր անձինք 2-րդ փուլում) շարունակվող արտամղման տեսակշրի բարձրացման փաստը: Այս միտվածությունը թեև բացատրվում է հետպատերազմյան տարիների սոցիալ-քաղաքական իրադրության ամորֆ ընկալումներով, այնուամենայնիվ ներկայանում է անաշխատունակ տարիքային խմբի սոցիալ-հոգեբանական և անձնային առանձնահատկությունների գերակայությամբ:


Այժմ ներկայացնենք հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դի-նամիկան առանձին-առանձին (Գծապատկերներ 1-8): Ներկայացված թվային տվյալներն ստացվել են ընտրազանգվածի պատասխանների միջինացման արդյունքում, որոնք իրենց տոկոսային ցուցանիշներով ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Գծապատկեր 1. Պրոյեկցիայի պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները



Ինչպես երևում է Գծապատկեր 2-ում տրված պատկերից, սահմանամերձ գոտում պրոյեկցիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի դրսևորումն առանձնանում է յուրաքանչյուր տարիքային խմբի ներսում ժամանակագրական առումով նվազման միտվածությամբ: Բացառություն է կազմում 30-59 տարեկանների խումբը, որտեղ թե՛ 1-ին, թե՛ 2-րդ փուլերում պրոյեկցիան դրսևորվել է պասիվ և ստվերված դիրքում:


Գծապատկեր 2. Իրականության ժխտման պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները



Գծապատկեր 2-ը ներկայացնում է իրականության ժխտման պաշտպանական մեխանիզմի համեմատաբար կայուն արտահայտվածությունը թե՛ ժամանակագրական առումով՝ տարիքային խմբերի ներսում, և թե՛ գրեթե բոլոր տարիքային խմբերի միջև: Այս մեխանիզմի գործառնության առանձնահատկությունն այն է, որ այն ցուցադրեց արդիականության բավական ցածր մակարդակ՝ բացառությամբ 2-րդ փուլի 60-ից բարձր անձանց տվյալների: Այլ խոսքերով, ուսումնասիրվող ընտրազանգվածի մոտ դրսևորվում է իրականության նկատմամբ իրատեսական պատկերացում: Պատճառը նույնպես պետք է տեսնել արցախահայության՝ սահմանամերձ գոտում բնակվելու հանգամանքում, որտեղ դժվար է անտեսել հետպատերազմյան ժամանակաշրջանի ապակայունացնող հետևանքները՝ ռազմական գործողությունների վերսկսման վտանգը, այդ վտանգով պայմանավորված կամավոր ուժերի «միշտ պատրաստ» լինելը, քաղաքական անորոշ մթնոլորտը և այլն: Հետաքրքիր փաստ է նաև այն, որ իրականության ժխտման մեխանիզմի ներկայությունը տոկոսային առումով բարձր տվյալների տեսքով գրանցվեցին միայն 2-րդ փուլում, տարեց մարդկանց մոտ, որոնք վերոնշյալ ապակայունացնող սպառնալիքները ներկայացնում են քողարկված և իրականության ժխտման կամ աղավաղման արդյունքում բացահայտում են «առանց

պատերազմի, առանց հաշտության» անորոշ իրավիճակի նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքն ու դիրքորոշումները:

Գծապատկեր 3. Արտամղման պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները



Գծապատկեր 3-ը ներկայացնում է արտամղման հոգեբանական պաշտպանության մեխանիզմի դինամիկական տարիքային և ժամանակագրական կտրվածքներով: Ուշադրության է արժանի այն փաստը, որ արտամղման մեխանիզմի ամենաբարձր ցուցանիշը վերաբերում է ուսումնասիրվող հետպատերազմյան շրջանի առաջին փուլին, այն էլ արտահայտվել է երիտասարդության շրջանում: Այդ ժամանակաշրջանը առավելագույնս կրում է պատերազմական գործողություններից հետո սոցիալական, հոգեբանական, տնտեսա-քաղաքական և ժողովրդագրական փոփոխությունների բացասական հետևանքները, որոնք իրենց հետքն են թողնում անձի ինքնության կառուցվածքում և նպաստում են երիտասարդ տարիքում անձի սոցիալականացման ընթացքի ապակառուցողական զարգացմանը: Գրաֆիկ 3-ի միջոցով հնարավոր է դառնում կատարել մեկ այլ եզրակացություն նույնպես. 1-ին փուլի հասուն տարիքում արտամղման պաշտպանության մեխանիզմի գործառույթային նշանակությունը կտրուկ նվազում է: Այն աննշան կերպով ակտիվանում



է միայն 60-ից բարձր տարիքային խմբում: Մակայն հետաքրքիր պատկեր է ստեղծվում ժամանակագրական երկու փուլերը համեմատելիս: Ինչպես տեսնում ենք, 2-րդ փուլի ներսում տարիքային մյուս խմբերի համեմատությամբ 18-29 տարեկան անձինք ցույց են տալիս նույնպես ամենաբարձր ցուցանիշները, թեև դրանք 1-ին փուլի նույն տարիքային խմբից տարբերվում են ուժգնության նվազմամբ: Իսկ հաջորդ տարիքային խմբերի մոտ գրեթե կրկնվում է արտամղման մեխանիզմի աստիճանային արդիականացումը՝ արտահայտված պաշտպանության այդ մեխանիզմի ցուցանիշների թեթևակի աճով: Այս պատկերը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.


1. արտակարգ իրավիճակային պայմանների պահպանման պարագայում արտամղման հոգեբանական պաշտպանության մեխանիզմն առավել արդիական է երիտասարդության շրջանում.

2. սահմանամերձ գոտում արտամղման մեխանիզմի արդիականությունը շարունակում է պահպանվել երիտասարդների մոտ նաև սոցիալական և պետական ինստիտուտների համեմատաբար կայունացման պայմաններում (ուսումնասիրման 2-րդ փուլ), սակայն ավելի թույլ դրսևորմամբ: Ուստի կարող ենք փաստել երիտասարդության շրջանում ժողովրդավարական ինստիտուտների կայունացման հետևանքով պետականության ամրապնդման և արտամղման մեխանիզմի գործառությանի արդիականացման բացասական կոռելացիոն կապի մասին.

3. տարիքային երկրորդ (30-59 տարեկաններ) և երրորդ (60 և բարձր) խմբերում արտամղման մեխանիզմի նշանակությունը, ի սկզբանե լինելով բավական ցածր մակարդակում, տարիների ընթացքում ցույց է տալիս աճի միտվածություն: Այս երևույթը բացահայտում է արտամղման կումուլյացիայի հնարավորությունները համապատասխան միջավայրային պայմանների ներքո և կարող է բացատրվել նրանով, որ հետպատերազմյան շրջանի անցումային փուլում, երբ դեռ չեն ձևավորվել պետականաշինության ավանդույթները և կենսակայունության հասնելու միջոցներից շարունակում է արդիական մնալ անհատական մոբիլիզացիոն ներուժը, արտամղման մեխանիզմը չի հանդիսանում հոգեբանական պաշտպանության բավարար միջոց: Այն դառնում է առավել անհրաժեշտ արտաքին պայմանների համեմատաբար ավելի անվտանգ դառնալու ժամանակ, երբ կենսակայունության հիմքերը կապվում են ժողովրդավարական ինստիտուտների գործառույթների հետ՝ թուլացնելով անհատական մոբիլիզացիոն պոտենցիալը, ինչի հետևանքով հնարավոր վտանգի գիտակցումն արտամղվում է և չեզոքանում.

4. ժամանակային երկու փուլերում էլ այս մեխանիզմի արտահայտվածությունն ավելի ցածր է երիտասարդների խմբի համեմատությամբ, ինչը կապվում է այդ խմբերում պաշտպանական այլ մեխանիզմների ավելի ակտիվ լինելու հետ, որոնք խոչընդոտում են արտամղման կումուլյացիան և վերարտադրումը:


Գծապատկեր 4. Ռացիոնալիզացիայի պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները



Գծապատկեր 4-ի միջոցով կարելի է բացահայտել ռացիոնալիզացիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի առանձնահատկությունները:


Այս մեխանիզմի գործառնությանն դրսևորումները կարելի է դիտարկել որպես նախորդ արտամղման մեխանիզմի հակապատկեր: Ի հակադրություն արտամղման մեխանիզմի արտահայտությունների՝ այստեղ տեսնում ենք երիտասարդության տարիքում ռացիոնալիզացիայի կիրառման նվազագույն մակարդակը, որը պահպանվում է ժամանակագրական երկու փուլերում: 30-59 տարեկան անձանց ընտրազանգվածը 1-ին փուլից արդեն իսկ ցույց է տալիս ռացիոնալիզացիայի բավական բարձր աստիճան, որը կումուլյացիայի միտվածություն է դրսևորում ժամանակագրական 2-րդ փուլում: Հաշվի առնելով այդ փուլի կարևորագույն առանձնահատկությունը՝ որպես սահմանամերձ գոտում խաղաղության կայունացման և պետականաստեղծ գործունեության տեսանելիության ձեռքբերում, ռացիոնալիզացիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի ակտիվ դերակատարումը կարելի է դիտարկել որպես կոնստրուկտիվ, սոցիոմետ պաշտպանության մեխանիզմ: Նշենք ևս մի հանգամանք՝ տարիքային երրորդ խմբում երևում է ռացիոնալիզացիայի գրեթե նույնպիսի բարձր արտահայտվածություն՝ այդ տարիքին բնորոշ գործառնությանն նշանակալիության որոշակի մեղմացման պատկերով:

Գծապատկեր 5. Ռեակտիվ կազմավորման պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները




Գծապատկեր 5-ում ստացված տվյալները նույնպես ուշագրավ են: Այս պաշտպանական մեխանիզմի արտահայտվածությունը կարելի է տարանջատել, նախևառաջ, ըստ ժամանակագրական փուլայնության: Առաջին փուլում տեսնում ենք ռեակտիվ կազմավորման անհամաչափ բաշխվածություն տարբեր տարիքային խմբերում՝ երիտասարդների մոտ նվազագույն ցուցանիշներից մինչև երկրորդ և երրորդ տարիքային խմբերի մոտ արձանագրված ցուցանիշների կտրուկ աճը: Այս պատկերը միանգամայն համընկնում է այդ խմբերում հետպատերազմյան շրջանին հատուկ աննախադեպ ծանր սոցիալ-հոգեբանական և անձնային խնդիրների հաղթահարման ռազմավարությանը: Այդ մեխանիզմի արդիականացման կտրուկ փոփոխությունը տեսնում ենք ուսումնասիրման 2-րդ փուլում: Արտաքին պայմանների փոփոխման աստիճանական և ոչ լիարժեք ուղղվածությունը դեպի կայունացում և պետականաշինություն ուղեկցվում է ռեակտիվ կազմավորման կիրառելիության կտրուկ նվազման: Հետաքրքիր է, որ այդ միտումը տեսնում ենք հասուն և տարեց մարդկանց մոտ: Երիտասարդության շրջանում նկատելի է ռեակտիվ կազմավորման մեխանիզմի թեկուզ թեթևակի, բայց, այնուամենայնիվ, աչքի ընկնող ակտիվացման միտվածություն: Այդ ակտիվացման մակարդակը գրեթե անփոփոխ է մնում տարիքային մյուս երկու խմբերում:

Գծապատկեր 6. Ռեգրեսիայի պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները




Գծապատկեր 6-ի միջոցով ներկայացված են ռեգրեսիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի միջինացված ցուցանիշները: Հաշվի առնելով այդ մեխանիզմի գործառնությանն նշանակության ընդհանուր առմամբ ցածր ցուցանիշները՝ վստահաբար կարող ենք փաստել այն, որ ռեգրեսիայի մեխանիզմը հիմնականում չի արտահայտում սահմանամերձ գոտու ազդեցության հոգեբանական պաշտպանության կարիքները: Բացառություն են կազմում միայն երիտասարդության շրջանում 2-րդ փուլով գրանցված ցուցանիշները: Անհանգստացնող փաստ է այն, որ այս տարիքային խմբում նկատվում է ռեգրեսիվ հակազդումների նման զարգացում: Այս միտումը թեև կարելի է ներկայացնել որպես զուտ սոցիալականացման տարիքային առանձնահատկություն, սակայն, կարծում ենք, տարիների ընթացքում ռեգրեսիայի պաշտպանական մեխանիզմի արդիականացման կումուլյացիան միանգամայն փոխկապակցված է երիտասարդության արժեքային համակարգի բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունների հետ, ինչն ակնբերաբար բացահայտվեց փորձարարական հետազոտության համար առանձնացված մեթոդների արդյունքների մշակման հաջորդ փուլերում:

Գծապատկեր 7. Կոմպենսացիայի պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները



Գծապատկեր 7-ի ցուցանիշները ներկայացնում են կոմպենսացիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի դրսևորման մանրամասները: Այն է՝ ամենաանհանգստացնող արդյունքը եղավ այն, որ ժամանակագրական երկու փուլերում էլ կոմպենսացիան նվազագույնս արժևորվեց երիտասարդության շրջանում: Իսկ ինչ վերաբերում է Գծապատկեր 7-ի միջոցով ստացված արդյունքների մեկնաբանմանը, ապա հարկ է նշել ուսումնասիրության երկու փուլերում էլ երկրորդ և երրորդ տարիքային խմբերի մոտ գրանցված բավական բարձր ցուցանիշների առկայությունը՝ տարեցների մոտ կոմպենսացիայի դրսևորման որոշակի նվազման միտումով: Հատկանշական է, որ կոմպենսացիայի բարձր ցուցանիշները գրանցվել են ուսումնասիրվող հետպատերազմյան շրջանի հենց սկզբում՝ մատնանշելով այդ մեխանիզմի կոնստրուկտիվ դերակատարությունը սթրեսաձին իրավիճակի հաղթահարման իմաստով: Բնութագրական է նաև այն, որ Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի համեմատական կայունացման շրջափուլում կոմպենսացիայի գործառության նշանակալիությունը համապատասխանաբար թուլանում է: Այս հետևությունը հիմք է հանդիսանում ինչպես երիտասարդների, այնպես էլ տարեցների մոտ արտակարգ իրավիճակային պայմաններում ադապտացիայի կոնստրուկտիվ մեխանիզմների արդիականացմանն ու արժևորմանն ուղղված կարևոր մեթոդաբանական և գործնական հետևություններին և համապատասխան հոգեբանական աշխատանքների իրականացման համար:

Գծապատկեր 8. Տեղափոխման պաշտպանական մեխանիզմի արտահայտվածության միջինացված տվյալները



Գծապատկեր 8-ը մեկնաբանում է տեղափոխման նշանակալիության դինամիկան ուսումնասիրության տարբեր փուլերում: Ինչպես երևում է գրաֆիկից, տարիքային առաջին խումբը կտրուկ առանձնանում է մնացած մյուս խմբերից: Թեև ժամանակագրական 2-րդ փուլում նկատում ենք երիտասարդների մոտ տեղափոխման մեխանիզմի որոշակի ապարժևորման երևույթ, այնուամենայնիվ այս մեխանիզմի դերակատարությունը շարունակում է մնալ երիտասարդների համար խիստ կարևոր և արդիական: Տարիքային մյուս երկու խմբերում հանդիպում ենք ավելի հանգստացման արտահայտություններին. տեղափոխման մեխանիզմի դերակատարությունը փոքր-ինչ ազդեցիկ է 1-ին փուլում, ինչը նվազում է 2-րդ փուլում ավելի տեսանելի դարձած սահմանամերձ գոտու ազգաբնակչության արժեքային համակարգի փոփոխություններին զուգահեռ: Ակնհայտ են դառնում պետականաշինության գործընթացի խորացմանը զուգընթաց տեղափոխման պաշտպանական մեխանիզմի ապարժևորումն ու չեզոքացումը:

Այժմ ներկայացնենք հոգեբանական պաշտպանական մեխանիզմների արտահայտվածության գումարային ցուցանիշները SPSS ծրագրային համակարգչա-մաթեմատիկական վերլուծության արդյունքում (Աղյուսակ 12.):

Աղյուսակ 2. Հոգեբանական պաշտպանության մեխանիզմների արտահայտվածության գումարային ցուցանիշները

	Գումար	N	Նշ.	Ստ. Շեղում	% ընդ. գումար	% ընդ. N
Պրոյեկցիա	124	6	20.67	15.616	100.0%	100.0%
Ժխտում	11	6	1.83	.753	100.0%	100.0%
Արտամղում	94	6	15.67	10.073	100.0%	100.0%
Ռացիոնալիզացիա	152	6	25.33	18.949	100.0%	100.0%
Ռեակցիա	57	6	9.50	4.416	100.0%	100.0%
Ռեգրեսիա	45	6	7.50	6.124	100.0%	100.0%
Կոմպենսացիա	85	6	14.17	10.889	100.0%	100.0%
Տեղափոխում	32	6	5.33	2.582	100.0%	100.0%

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ում, Արցախի Հանրապետության սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում ուսումնասիրվող հոգեբանական պաշտպանության մեխանիզմներից առավել արտահայտված են պրոյեկցիան, ռացիոնալիզացիան, արտամղումն ու կոմպենսացիան: Այս արդյունքն ամրապնդվեց զույգերով պաշտպանական մեխանիզմների վիճակագրական փոխկապվածության ցուցանիշների օգնությամբ (Աղյուսակ 3.):

Աղյուսակ 3. Հոգեբանական պաշտպանության մեխանիզմների վիճակագրական փոխկապվածության զույգ ցուցանիշները

		Նշ.	N	Ստ. Շեղում	Ստ. սխալի նշ.
Զույգ 1	Պրոյեկցիա	20.67	6	15.616	6.375
	Ռացիոնալիզացիա	25.33	6	18.949	7.736
Զույգ 2	Արտամղում	15.67	6	10.073	4.112
	Կոմպենսացիա	14.17	6	10.889	4.445
Զույգ 3	Ռեակցիա	9.50	6	4.416	1.803
	Ռեգրեսիա	7.50	6	6.124	2.500
Զույգ 4	Ժխտում	1.83	6	.753	.307
	Տեղափոխում	5.33	6	2.582	1.054

Աղյուսակ 3-ում առանձնացվել են հետևյալ զույգ մեխանիզմները՝ պրոյեկցիա – ռացիոնալիզացիա, արտամղում – կոմպենսացիա, ռեակտիվ կազմավորում – ռեգրեսիա իրականության ժխտում – տեղափոխում: Մեխանիզմների զույգերի բաժանման համար հիմք են հանդիսացել դրանց միջինացված արտահայտությունների թվային համեմատելիությունն ու մոտիկ

կլաստերային խմբերում գտնվելը: Այս գույգերի թվային արտահայտվածությունը ոչ միայն ամրապնդում է առաջին երկու գույգ մեխանիզմների դրսևորման առաջնահերթությունը, այլև ներկայացնում է դրանց տարրերի միջև կոռելացիոն փոխազդեցությունները: Փոխազդեցությունների բովանդակային ուղղվածությունը երևում է նույն աղյուսակում ներկայացված ստանդարտ շեղումների թվային ցուցիչներով: Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ կոռելացիաների մանրամասն հաշվետվությունը (Աղյուսակ 4.):

Աղյուսակ 4. Հոգեբանական պաշտպանության մեխանիզմների գույգ ցուցանիշների միջև կոռելացիոն հաշվետվություն

	N	Կոռելացիա	Նշանակ.
<b>Զույգ 1</b> Պրոյեկցիա&Ռացիոնալիզացիա	6	-.980	.001
<b>Զույգ 2</b> Արտամղում&Կոմպենսացիա	6	-.955	.003
<b>Զույգ 3</b> Ռեակցիա&Ռեգրեսիա	6	-.277	.595
<b>Զույգ 4</b> Ժխտում&Տեղափոխում	6	.137	.795

Ինչպես երևում է Աղյուսակ 4-ից, բացասական կոռելացիոն փոխկապվածության առավել արտահայտիչ ցուցանիշներն են դրսևորում «պրոյեկցիա – ռացիոնալիզացիա» և «արտամղում–կոմպենսացիա» պաշտպանական մեխանիզմների գույգերը: Սույնով ապացուցվեց վարկածն այն մասին, որ սահմանամերձ գոտու ազգաբնակչության առավել արտահայտված հոգեբանական պաշտպանության մեխանիզմներն են ռացիոնալիզացիան, կոմպենսացիան, արտամղումն ու պրոյեկցիան: Վերոգրյալը թույլ է տալիս նաև բնութագրել պաշտպանական գույգ մեխանիզմներից ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի առավել կոնստրուկտիվ դերակատարությունը հետպատերազմյան շրջանում սթրեսածին պայմանների հաղթահարման և պրոյեկցիայի ու արտամղման մեխանիզմների «գործառությանին չեզոքացման» իմաստով: «Իրականության ժխտում–տեղափոխում» գույգի պարագայում նկատվեց ինչպես նշանակալիության պասիվություն, միաժամանակյա դերակատարության պարագայում՝ նաև դրական փոխկապվածություն:

### Եզրակացություն

Սահմանամերձ գոտում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրական կոնստրուկտներից առավել արտահայտված են կոմպենսացիան և ռացիոնալիզացիան, որոնք նկարագրվում են սոցիոմետ նշանակություններով և դրսևորվում են պետականաստեղծ վարքագծի համատեքստում:



Բացասական կոռելացիոն փոխկապվածության առավել արտահայտիչ ցուցանիշներն են դրսևորում «պրոյեկցիա – ռացիոնալիզացիա» և «արտամղում-կոմպենսացիա» պաշտպանության մեխանիզմների գույգերը:

Ի հակադրություն արտամղման մեխանիզմի արտահայտությունների՝ երիտասարդության տարիքում տեսնում ենք ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի կիրառման նվազագույն մակարդակը, որը պահպանվում է ժամանակագրական երկու փուլերում: Հաշվի առնելով հետպատերազմյան շրջանի 2-րդ փուլի կարևորագույն առանձնահատկությունը՝ որպես սահմանամերձ գոտում խաղաղության կայունացման և պետականաստեղծ գործունեության տեսանելիության ձեռքբերում, ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի ակտիվ դերակատարումը կարելի է դիտարկել որպես կոնստրուկտիվ, սոցիոմետ պաշտպանության մեխանիզմ:

Հատկանշական է, որ կոմպենսացիայի բարձր ցուցանիշները գրանցվել են ուսումնասիրվող հետպատերազմյան շրջանի հենց սկզբում՝ մատնանշելով այդ մեխանիզմի կոնստրուկտիվ դերակատարությունը սթրեսածին իրավիճակի հաղթահարման իմաստով: Բնութագրական է նաև այն, որ Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի համեմատական կայունացման շրջափուլում կոմպենսացիայի գործառությանին նշանակալիությունը համապատասխանաբար թուլանում է: Այս հետևությունը հիմք է հանդիսանում ինչպես երիտասարդների, այնպես էլ տարեցների մոտ արտակարգ իրավիճակային պայմաններում ադապտացիայի կոնստրուկտիվ մեխանիզմների արդիականացմանն ու արժևորմանն ուղղված մեթոդաբանական և գործնական կարևոր հետևությունների և համապատասխան հոգեբանական աշխատանքների իրականացման համար:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ананьев Б.Г.** Человек как предмет познания. СПб: Питер, 2001. -228 с.
2. **Асмолов А.Г.** Психология личности. М.: Изд-во МГУ, 1990. - 367 с.-25
3. **Леонтьев А.А.**, Психология общения, Тарту, 1974, с.93
4. **Франкл В.**, Человек в поисках смысла, изд. «Вашингтон» 1985г. стр. 1-13
5. **Фромм Э.**, Бегство от свободы, М., 2011, 288 с.
6. **Rokeach, Milton** (1968). Beliefs, attitudes, and values: A theory of organization and change. San Francisco, CA: Jossey-Bass.
7. **Նալչաջյան Ա.**, Հոգեբանության հիմունքներ, Երևան 1997, էջ 13, 486-496
8. **Адлер А.** Практика и теория индивидуальной психологии. М.: Прама. 1993.-190 с.-3
9. **Василюк Ф. Е.** Психология переживания: анализ преодоления критических ситуаций. М.: Изд-во Моск. ун-та, 1984. 200 с.
10. **Демина, Л.Д.** Некоторые аспекты психолого-педагогической адаптации студентов к вузовскому обучению / Педагогические условия совершенствования адаптационных процессов в вузе: Межвузовский тематический сборник. Барнаул, 1988. — С.44-51.
11. **Лазарус Р.** Теория стресса и психофизиологические исследования / Эмоциональный стресс. Л.: Медицина, 1970. – 208 с.

12. **Налчаджян А. А.** Психологические защитные механизмы // Самосознание и защитные механизмы личности: хрестоматия. Самара: БАХРАХ-М, 2000. С. 395–482.
13. **Фрейд З.** О психоанализе // Психоаналитические этюды / сост. Д. И. Донского, В. Ф. Круглянского. Минск: Попурри, 1997. С. 5–47.
14. **Эриксон Э.** Идентичность: юность и кризис. М., 2006, - 352с.
15. **Adler A.** Der Sinn des Lebens. Frankfurt: Fisher Verlag, 1983. P. 45, 55.
16. **Plutchik R.** A general psychoevolutionary theory of emotions. In R. Plutchik, & H. Kellerman (Eds.). Emotion: Theory, research, and experience: Vol. 1. N.Y.: Academic Press, 1980.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 23.01.2020 թ.,  
 ուղարկվել է գրախոսության 21.02.2020 թ., ընդունվել է տպագրության 24.03.2020 թ.:

378.046.2

## SOME ISSUES OF RUNNING EFFECTIVE ONLINE COURSES

**ARUSYAK HARUTYUNYAN**

International Scientific-Educational Center of NAS RA

[arusyak.harutyunyan@isec.am](mailto:arusyak.harutyunyan@isec.am)

### Abstract

This article discusses the experience of running a MOOC on teaching B1-level Business English according to the Common European Framework of Reference for Languages (CEFR) through the American Corners in Armenia and highlights several mechanisms needed to ensure effective online teaching and learning so as not to have high dropout rate and keep the learners of the MOOC interested and motivated throughout the entire three-month-long course.

### Keywords and phrases

Online education, online learning and teaching, MOOC, effective online learning, effective feedback, personalization and individualization of learning and teaching.

**ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՑՈՒՆԱՎԵՏ ՎԱՐՄԱՆ  
 ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

**ԱՐՍՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

[arusyak.harutyunyan@isec.am](mailto:arusyak.harutyunyan@isec.am)

### Համառոտագիր

Սույն հոդվածում քննարկվում է Ամերիկյան անկյունների միջոցով կազմակերպվող լեզուների իմացության համաեվրոպական համակարգի Բ1 մակարդակի «Գործարար անգլերեն» բաց հասանելիության առցանց դասընթացի վարման փորձը Հայաստանում: Առանձնացվել են որոշ կառուցակարգեր, որոնք անհրաժեշտ են արդյունավետ առցանց դասավանդման և ուսումնառության համար, սահմանվել են չափանիշներ՝ կապված դասընթացներին մասնակցելու ցուցանիշի, ինչպես նաև դասընթացի եռամսյա տևողության ընթացքում բաց հասանելիության առցանց դասընթացի մասնակիցներին մոտիվացնելու վերաբերյալ:

## **Բանալի բառեր և բառակապակցություններ**

Հեռավար կրթություն, հեռավար ուսուցում և դասավանդում, հեռավար կրթության արդյունավետություն, արդյունավետ հետադարձ կապ, ուսուցման և դասավանդման անհատականացում:

## **НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ЭФФЕКТИВНОГО ПРОВЕДЕНИЯ ОНЛАЙН-КУРСОВ**

### ***АРУСЯК АРУТЮНЯН***

Международный научно-образовательный центр НАН РА  
[arusyak.harutyunyan@isec.am](mailto:arusyak.harutyunyan@isec.am)

### **Аннотация**

В статье обсуждается опыт проведения языкового онлайн-курса «Деловой английский» уровня B1 в соответствии с общеевропейской системой уровня владения иностранным языком с использованием массовых открытых онлайн-курсов (МООК) в «Американских уголках» Армении. Основная задача - выделить и обосновать механизмы, необходимые для обеспечения эффективного онлайн-обучения с целью избежания высокого процента отсева и поддержания мотивации студентов МООК на протяжении всего трехмесячного курса.

### **Ключевые слова и фразы**

Онлайн обучение, онлайн обучение и преподавание, эффективное онлайн обучение, эффективная обратная связь, персонализация и индивидуализация обучения и преподавания.

### **Context**

With over 650 Spaces in 150 countries worldwide, American Spaces provide welcoming environments where visitors can connect and learn about the United States through programs and lectures, as well as through books, movies, and magazines. Hosted in embassies, schools, libraries, and other partner institutions worldwide, American Spaces are platforms for providing information and engagement through activities, such as;

- Educational advising for those who want to study in the U.S.,
- Workshops on a range of topics from career skills to English language learning,
- Classes and clubs introducing new technologies, 21st century digital skills, and academic resources,
- Films, discussions, and lectures on entrepreneurship, leadership, current events, international affairs, and much more.

The first American Space in Armenia opened in April 2005 with the inauguration of the Yerevan American Corner in partnership with the Yerevan City Central Library. There are now five American Corners located in Yerevan, Gyumri, Vanadzor, Kapan, and Charentsavan<sup>10</sup>.

---

<sup>10</sup> <https://am.usembassy.gov/education-culture/american-corners/>

## Introduction

With the US Embassy Yerevan funding, a 12-week Business English massive open online course was developed and delivered through American Corners Yerevan, Gyumri, Kapan and Vanadzor on the Moodle of the US Embassy in Yerevan.

After face-to-face interviews with over 200 applicants in Yerevan and online interviews through regional American Corners (AC), eventually around 150 applicants were selected with the threshold knowledge of B1 according to Common European Framework of Reference for Languages (CEFR). Out of these 150 applicants, only 95 took part in the IT training sessions and were enrolled in the online course.

The course has the following format: one online session with the involvement of all learners from all ACs and one interactive webinar with smaller groups. The online sessions were designed to activate the background schemata of the learners to have the learner recreate an experience to have new information associated with what is already known.

Unlike the online sessions, the interactive webinars gave more room for personalization of learning and teaching, as well as differentiation and individualization of instruction. Here the course instructors were able to cater to their learners' individual needs and learning styles thus keeping the learners motivated throughout the whole course.

The slides designed by the course instructors always had a lead-in activity, which included visuals, discussion-generating questions, and personalization activities to set up the mental context for the content area. The lead-in activities were followed by an introduction to a new language item. The target language was later practiced through different activities, completion exercises and activities that not only encouraged the learners to use the target language but also developed their critical thinking skills. During live sessions, not all the participants afforded the opportunity to speak due to a high number of participants, time limitations and technical constraints.

When working on their receptive skills, the learners developed their top-down and bottom-up processing skills in reading and listening with the help of short texts, messages and exchanges addressing business topics.

Besides the online session, the learners had a set of activities to complete on the Moodle each week such as quizzes, assignments and forums for better acquisition of the material presented. Research has identified Moodle as a complete and adequate platform for implementation in higher education (Aydin & Tirkes, 2010; Williams van Rooij, 2012). It is viewed as a best-practice instructional mode and that students who do not engage with blended learning are academically disadvantaged (Francis & Shannon, 2013). Moodle was ranked among the top 20 best LMSs based on user experiences in 2018 and 2019 (Andre, 2019; eLearning Industry, 2018)

Recent studies highlight the benefits of online quizzes and students' positive attitude towards them (Cohen & Sasson, 2016; Wallihan et al., 2018). Such benefits include improving student motivation, enhancing understanding and active learning, and deterring cheating, as long as the quiz questions are not too easy (Cook & Babon, 2017). Carefully designed online quizzes can be one of various solutions to prevent

student plagiarism by randomising questions, shuffling responses, providing timestamps and logs of multiple quiz attempts with systematic evaluation processes (Sullivan, 2016).

### **Method**

The evaluation of the project was approached from qualitative and quantitative perspectives. The main evaluation tools included an end-of-course survey completed by 51 participants and e-mail communication with the participants who had withdrawn from the project. During the communication, the learners cited the main reasons for their withdrawal and during the survey they reported what they had found useful about the course and their learning experience overall and which aspects they would like to see improved if a similar project was hosted. The data collected from the survey aimed to help the teams of instructors and course designers to recognize the problems the participants experienced throughout the project and tackle them in their practice. At the same time, throughout the project, methods of statistical data analysis and Moodle statistics were used to keep track.

### **Research Findings**

A key to successful online course and retention of students is the personalized feedback. Giving effective online feedback is a crucial skill for educators to develop because it guides the learners' development. Since feedback is important to the learning process, the art of giving effective online feedback is a critical skill for an educator.

Graham and colleagues (Graham, C., Cagıtay, K., Craner, J., Lim, B., & Duffy, T., (2000)), in an evaluation of online courses, considered two types of feedback: acknowledgment (providing recognition) and informational (providing factual information). A study by Oehikers and Gibson (Oehikers, R., & Gibson, C. (2001)) showed that students in online courses appreciated emotional support from faculty as well as help with problem solving. Social interaction literature specific to online distance education supports affective approaches, such as using students' names, building a sense of community, and providing encouragement (Muirhead, B. (2000)). Diekelmann and Mendias (Diekelmann, N., & Mendias, E. P. (2005)) emphasize that in order to create a safe, fair, and respectful place for learning in online courses, teachers need to reflect on the meanings and significance of their responses to students.

In this project, the course instructors responded in a timely manner to individual questions or issues that had been raised in discussion groups, gave students regular feedback on their assignments and their forum posts, and were flexible enough to make changes to the course mid-stream based on student feedback.

One advantage of Moodle quizzes is that feedback can be automatic and timely, providing students with immediate feedback on their learning with opportunities to improve their understanding. Such immediate feedback is useful for students who could be struggling to understand the subject matter. Moodle quizzes with their

facility to use numerous multimedia options such as audio and video can support this interaction and provide the immediate feedback which positively facilitates the students' level of understanding. Overall, there were 37 quizzes and 3 assignments built on the Moodle LSM in the entire duration of the MOOC, which had, on average, 70% of completion rate.

In order to decrease the expected dropout rate, the course instructors reached a decision to have two intense weeks (two online sessions and interactive webinars each week instead of one online session and one interactive webinar each week) to have the course completed by New Year and allotting the learners more time to do online quizzes in the Moodle after New Year. This decision proved to be effective, as in this way no dropout took place in this period of the course.

By the end of the course, the learners had learned the language for business communication required at B1 level, they practiced the target language through the quizzes on the Moodle and other activities conducted during live sessions and interactive webinars.

The course promoted building language skills and empowered the following groups: 1) English teachers and teachers of other languages, 2) researchers, 3) students, 4) NGOs and business sector representatives.

The MOOC had 51 graduates out of 91 initially enrolled participants - out of who 34 participants were from Yerevan AC, 11 - Gyumri AC, 3 - Vanadzor AC and 3 - Kapan AC.

These numbers are indicative of the real success for a MOOC, especially if we take into consideration the fact that the average completion rate for a MOOC is 15%, while this course proves to be an absolute success with 53% of completion and graduation rate. Though some researchers might associate a high dropout rate with a failure in online education, others (Diaz, D. P. (2002)) argue that the factors affecting the dropout decision are not subject to any control and a high dropout rate is not necessarily indicative of academic nonsuccess.

The reasons for drop-outs that were identified during communication with course participants are as follows:

- Lack of time (e.g. tight schedule at work, university lessons/exams)
- Lack of motivation
- Technical problems, e.g. problems with their personal laptops/PCs, low-quality internet connection

There was also a pool of learners who didn't answer the course instructors' e-mails, so their reasons for dropout remain unclear. To engage the cohort of "ghost" learners, the course instructors sent regular e-mails to all course participants both via Moodle messaging board and personal e-mails when monitoring the course progress, Moodle statistics or observing any demonstration of disengagement by certain course participants. The same methods were used to advise the course participants on any changes in the course schedule.

A post-course survey was administered to identify the satisfaction level of the participants with the course and the course instructors in general. There were 51

responses submitted. Overall, the course received on average 9.4 satisfaction rate out of 10, while the course instructors' satisfaction rate is around 10 out of 10. Here are some quotes from the learners' responses: "I can say that they were all very effective, attentive to details. They all tried to pay attention and time to all the students." "Learning is the key to success. Joining this awesome course and learning was a success story itself for me".

Another interesting research finding was identified in the post-course survey: the learners were asked rate the overall effectiveness of individual instructor's teaching (the MOOC had three Business English instructors who interchanged each other to run online sessions with the involvement of all learners, but permanently ran interactive webinars with the same group in smaller numbers), the respondents highly valued the effectiveness of the each instructor, nevertheless, most respondents had the highest score, 10 out of 10, for the instructors of their interactive webinars, which agains comes to prove that personalization and individualization of the teaching and learning, as well as effective feedback is the most crucial key to participants' motivated learning in the MOOCs and their subsequent completion.

### **Conclusions**

Not all courses are created equally good for feedback, but a purposeful approach to feedback in MOOC design can lead to new learning opportunities. Explicit thinking about each assignment specific to course outcomes sets the stage for student learning.

The customised and automated feedback embedded in the Moodle quizzes was another factor to count into the success of the MOOC. The relevant immediate automated feedback for each question explained common mistakes made by students and significant time was saved by not providing repetitive feedback for common mistakes. The staged online activities significantly reduced the time that instructors spent on explaining the topics.

Having smaller groups for live sessions and interactive webinars to be able to address both the individual needs and learning styles of the learners when elaborating tasks and appropriate content for an online course to allow diversification is highly recommended. As we can see, personalization of learning and appropriate feedback are the key to the success especially in case of MOOCs.

The success stories shared by the MOOC participants helped indentify how the course facilitated to achieve their goals: starting from boosting employability skills, increased participation in international conferences to aiding local English teachers in shaping their online teaching skills and feel more competitive in the local and foreign markets.

### **REFERENCES**

1. **Andre, L.** (2019). 20 best LMS software solutions of 2019, FinancesOnline. All B2B. <https://financesonline.com/top-20-lms-software-solutions/>.

2. **Aydin, C. C., & Tirkes, G.** (2010). Open source learning management systems in distance learning. *Turkish Online Journal of Educational Technology*, 9(2), 175–184.
3. **Cohen, D., & Sasson, I.** (2016). Online quizzes in a virtual learning environment as a tool for Formative Assessment. *Journal of Technology and Science Education*, 6(3), 188–208. <https://doi.org/10.3926/jotse.217>
4. **Cook, B. R., & Babon, A.** (2017). Active learning through Online Quizzes: Better learning and less (busy) work. *Journal of Geography in Higher Education*, 41(1), 24–38. <https://doi.org/10.1080/03098265.2016.1185772>.
5. **Diaz, D. P.** (2002). Online drop rates revisited. *The Technology Source*, May/June 2002. [Online]. Available: [http://technologysource.org/article/online\\_drop\\_rates\\_revisited/](http://technologysource.org/article/online_drop_rates_revisited/)
6. **Diekelmann, N., & Mendias, E. P.** (2005). Being a supportive presence in online courses: Attending to students' online presence with each other. *Journal of Nursing Education*, 44(9), 393-395.
7. **Francis, R., & Shannon, S. J.** (2013). Engaging with blended learning to improve students' learning outcomes. *European Journal of Engineering Education*, 38(4), 359–369. <https://doi.org/10.1080/03043797.2013.766679>.
8. **Graham, C., Cagıtay, K., Craner, J., Lim, B., & Duffy, T.** (2000). Teaching in a web based distance learning environment. (CRLT Technical Report No. 13-00). Bloomington, IN: Indiana University, Center for Research on Learning and Technology. [Online]. Available: <http://crlt.indiana.edu/publications/crlt00-13.pdf>.
9. **Oehikers, R., & Gibson, C.** (2001). Learner support experienced by RNs in a collaborative distance RN to BSN program. *Journal of Continuing Education in Nursing*, 32(9), 266-273. Muirhead, B. (2000). Enhancing social interaction in computer-mediated distance education. *Education at a Distance*, 15(4). [Online]. Available: [www.usdla.org/html/journal/APR01\\_Issue/article02.html](http://www.usdla.org/html/journal/APR01_Issue/article02.html).
10. **Sullivan, D. P.** (2016). An integrated approach to preempt cheating on asynchronous, objective, online assessments in graduate business classes. *Online Learning*, 20(3), 195 –209. <https://doi.org/10.24059/olj.v20i3.650>.
11. **Thevenot, C.** (2010). Arithmetic word problem solving: Evidence for the construction of a mental model. *Acta Psychologica*, 133(1), 90 –95. <https://doi.org/10.1016/j.actpsy.2009.10.004>.
12. **Wallihan, R., Smith, K. G., Hormann, M. D., Donthi, R. R., Boland, K., & Mahan, J. D.** (2018). Utility of intermittent online quizzes as an early warning for residents at risk of failing the pediatric board certification examination.(Report). *BMC Medical Education*, 18, 1. <https://doi.org/10.1186/s12909-018-1366-0>
13. **Williams van Rooij, S.** (2012). Open-source learning management systems: A predictive model for higher education. *Journal of Computer Assisted Learning*, 28(2), 114 –125. <https://doi.org/10.1111/j.1365-2729.2011.00422.x>.
14. **Zsohar, H., & Smith, J. A.** (2009). The power of “and” and “but” in constructive feedback on clinical performance. *Nurse Educator*, 34(6), 241-243

Հոդվածը ներկայացվել է տպագրության 03.03.2020 թ.,  
 ուղարկվել է գրախոսության 08.04.2020 թ., ընդունվել է տպագրության 09.05.2020 թ.:



## MANAGEMENT OF DOCTORATE IN THE MARKET OF SCIENCE

***ATOM MKHITARYAN***

PhD in Physical and Mathematical Sciences  
International Scientific-Educational Centre of NAS RA

